ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՏԻԱՐ ԺԱԿ ՇԻՐԱԿԻՆ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՎԱԵՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԱՐ ԺԱԿ ՇԻՐԱԿ,
ՆԱԽԱԳԱՀ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Փարիզ, Քաղաքապետարան 75004

Ձերդ Վսեմություն,

Հոգեկան մեծ գոհունակությամբ իմացանք Ձեր՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ ընտրվելու ուրախ լուրը:

Մեզ քաջ ծանոթ է Ձեր բացառիկ սերը Ձեր մեծ հայրենիքի՝ Ֆրանսիայի հանդեպ, Ձեր նվիրումը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում Ֆրանսիայի ժողովրդի առաջընթացին, ամբողջ Եվրոպայում և համայն աշխարհում խաղաղության և կայունության գործում նրա կատարած դերին:

Մեզ հայտնի է նաև Ձեր անկեղծ սերը, Ձեր համակրանքն ու խոր հարգանքը հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու նկատմամբ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ մեր Մայր Հայրենիքում:

Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աղոթում ենք Տիրոջը, որ Ձեզ շնորհի տոկուն առողջություն և լիակատար հաջողություններ Ձեր պատասխանատու աշխատանքներում՝ ի բարօրություն Ֆրանսիայի ժողովրդի, ի բարգավաճումն Ֆրանսիայի և ի փառս Աստուծո:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ,
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, 10 մայիսի 1995 թ.